ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	թիվ 2	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Չի հրապարակվել	*Ընդունման վայրը*	Մոսկվա
Ընդունող մարմինը	Եվրասիական միջկառավարական խորհուրդ	*Ընդունման ամսաթիվը*	13.04.2016
Ստորագրող մարմինը	Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ	*Ստորագրման ամսաթիվը*	13.04.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը		*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2016 թվականի **թիվ 2** քաղ. Մոսկվա

«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 92-րդ հոդվածի 9-րդ կետի և «Արդյունաբերական համագործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 27 հավելված) 2-րդ կետի իրականացման նպատակներով՝ Եվրասիական միջկառավարական խորհուրդը որոշեց.

1. Հաստատել «Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձևավորման և գործառման մասին» հիմնադրույթը՝ կցվում է:

2. Սահմանել, որ եվրասիական տեխնոլոգիական հարթակներ ձևավորելիս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդն առաջնորդվում է ցանկով սահմանված ուղղություններով՝ համաձայն հավելվածի:

3. Եվրասիական տնտեսական հաձնաժողովի խորհրդին՝ մինչև 2016 թվականի հուլիսի 1-ն ընդունել որոշում՝ սույն Որոշմամբ նախատեսված ցանկի շրջանակներում գերակա եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձևավորման մասին:

4. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ մինչեւ 2016 թվականի հուլիսի 1-ը դիտարկել եվրասիական տեխնոլոգիական հարթակները պետական գիտատեխնիկական զարգացման ծրագրերում ներառելու հնարավորությունը:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է